



ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ N 2-Լ

ԴԱՏԱԿԱՆ ԿԱՐԳԱԴՐԻՉՆԵՐԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԱՌԱՋԻՆ ԱՆԳԱՄ ՈՐՊԵՍ
ԴԱՏԱԿԱՆ ԿԱՐԳԱԴՐԻՉ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԱՆՑՆՈՂ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ԵՐԴՄԱՆ
ԿԱՐԳԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով ««Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 2022 թվականի դեկտեմբերի 23-ի ՀՕ-575-Ն օրենքի 16-րդ հոդվածը, ղեկավարվելով «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» օրենքի 10-րդ հոդվածի 12-րդ մասին 12-րդ կետով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Սահմանել դատական կարգադրիչների ծառայությունում առաջին անգամ որպես դատական կարգադրիչ ծառայության անցնող քաղաքացիների երդման կարգը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կ. ԱՆԴՐԵԱՍՅԱՆ

2023թ. հուլիսի 3
ք. Երևան

**Հավելված
Բարձրագույն դատական խորհրդի
նախագահի
2023թ. հուլիսի 3-ի
թիվ N 2-Լ որոշման**

Կ Ա Ր Գ

**ԴԱՏԱԿԱՆ ԿԱՐԳԱԴՐԻՉՆԵՐԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԱՌԱՋԻՆ ԱՆԳԱՄ ՈՐՊԵՍ
ԴԱՏԱԿԱՆ ԿԱՐԳԱԴՐԻՉ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԱՆՑՆՈՂ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ԵՐԴՄԱՆ**

1. Սույն կարգը սահմանում է դատական կարգադրիչների ծառայությունում առաջին անգամ որպես դատական կարգադրիչ ծառայության անցնող քաղաքացիների երդման գործընթացը:

2. Դատական կարգադրիչների ծառայությունում առաջին անգամ որպես դատական կարգադրիչ ծառայության անցնող յուրաքանչյուր անձ երդում է տալիս անհատապես և այն հաստատում անձնական ստորագրությամբ:

3. Դատական կարգադրիչների ծառայությունում առաջին անգամ պաշտոնի նշանակվող անձի կողմից երդումը տրվում է մեկ անգամ:

4. Դատական կարգադրիչների ծառայությունում երդում տալիս են՝

1) դատական կարգադրիչների ծառայությունում առաջին անգամ ծառայության անցնող անձինք՝ պաշտոնի նշանակվելուց և «Դատական դեպարտամենտում ծառայության մասին» օրենքով սահմանված փորձաշրջանի ժամկետի ավարտից հետո՝ մեկ ամսվա ընթացքում,

2) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով պետական այլ ծառայությունից դատական կարգադրիչների ծառայություն տեղափոխված ծառայողները՝ դատական կարգադրիչների ծառայության թափուր պաշտոններում նշանակվելուց հետո՝ մեկ ամսվա ընթացքում:

5. Դատական կարգադրիչների ծառայության բաժիններում և բաժանմունքներում երդում տվողների հետ, մինչև երդման արարողության օրը, տարվում է բացատրական աշխատանք, որի ընթացքում պարզաբանվում են երդման կարևորությունը և նշանակությունը, դատական կարգադրիչների ծառայության առանձնահատկություններն ու «Դատական դեպարտամենտում ծառայության մասին» Հայաստանի

Հանրապետության օրենքով սահմանված երդման տեքստի բովանդակությունը, և հայտարարվում է երդման արարողության վայրը, օրը և ժամը:

6. Երդման արարողությունն անցկացվում է դատական կարգադրիչների ծառայության պետի կողմից սահմանված վայրում:

7. Դատական կարգադրիչը երդման հանդիսավոր արարողությանը ներկայանում է իրեն հատկացված ծառայողական համազգեստով:

8. Երդման արարողությունն անցկացվում է հանդիսավոր պայմաններում, Հայաստանի Հանրապետության դրոշի առջև, դատական կարգադրիչների ծառայության համապատասխան բաժնի կամ բաժանմունքի ղեկավարի մասնակցությամբ:

9. Երդում տվող դատական կարգադրիչները հերթականությամբ հրավիրվում են շարքից, և նրանցից յուրաքանչյուրը ներկաների առջև բարձրաձայն ընթերցում է «Դատական դեպարտամենտում ծառայության մասին» օրենքով սահմանված երդման տեքստը, ստորագրում իր անվան, ազգանվան դիմաց, այնուհետև գրավում իր տեղը շարքում: Երդման արարողության ավարտից հետո հնչեցվում է Հայաստանի Հանրապետության օրհներգը:

10. Դատական կարգադրիչի կողմից ստորագրված երդման տեքստը (Ձև N1) պահվում է նրա անձնական գործում:



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱԿԱՆ ԿԱՐԳԱԴՐԻՉՆԵՐԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

Ե Ր Դ Ո Ւ Մ

Ես՝ _____,

(անուն, հայրանուն, ազգանուն)

ծառայության անցնելով Հայաստանի Հանրապետության դատական կարգադրիչների ծառայությունում՝ երդվում եմ իմ լիազորությունները կատարելիս պահպանել Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը և օրենքները, մարդու և քաղաքացու իրավունքներն ու ազատությունները, անվերապահորեն և բարեխիղճ կատարել դատական կարգադրիչի ծառայողական պարտականությունները, բարձր պահել դատարանի հեղինակությունը:

(ստորագրություն)

« ____ » « _____ » 20__ թ.